

**Լ. ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇԽԱՐՆԵՐԸ»՝ ՆԱԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ\*  
Անահիտ Աթայան**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ԱրՊԳ*

Բանասիրության մեջ բազմիցս խոսվել է հայ ժողովրդական բանահյուսության, ազգագրության բազում առանձնահատկությունների, միջազգային տարաբնույթ զուգահեռների, լեզվի և ոճի, բարձր գաղափարայնության, պատմական հենքի, ժանրային տեսական հիմնավորումների մասին:

Արցախի ժողովրդական բանահյուսությունը հայ ժողովրդական ֆոլկլորի անքակտելի մասն է՝ իր հրաշք գանձարանով ու անսպառ ակունքներով: Նրա հավաքման ու հրատարակման գործում մեծ ու անգնահատելի է Բահաթյան եղբայրների, Մակար Բարխուդարյանի, Երվանդ Լալայանի, Կոնստանտին Մելիք Շահնազարյանի, Սարգիս Իսրայելյանի, Մարգարիտ Գրիգորյանի, Ալ. Ղազիյանի և մի շարք այլ բանահավաքների ու ազգագրագետների աշխատանքը:

Առաջնորդվելով «Յուրաքանչյուր ժողովրդական ժողովրդի չափ թանկ է իմ սրտին» սկզբունքով է արցախցի մշտավորական, ճանաչված մանկավարժ, բանասեր, բանահավաք, ազգագրագետ՝ Լ. Չարությունյանը լրացնում բանահավաքների աստղաբույլը՝ հավաքելով ու հրատարակելով բանահյուսական-ազգագրական 5 ժողովածու՝ համոզված, որ բանահյուսությունն ու ազգագրությունը ժողովրդի կենսագրությունն են, նրա պատմական հիշողությունը, որը դարերի ընթացքում վերածվել է ավանդության, լեգենդի, ասացվածքի, սովորության, հեքիաթի ու բանահյուսական այլ ժանրերի: Լ. Չարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» գրքերը արցախցու խորհրդածություններից, կենսավործից, ավանդական սովորույթների, ընտանեկան օջախի, պատվասիրության մշտահունչ ակորդներից հյուսված ստեղծագործություններ են, մասունքներ, որոնք իրենց վրա կրում են հողի աշխատավորի քրտինքի բույրը, հայրենի հողին կապված լինելու հավերժական ուժը, արցախցու պատվասիրությունն ու մարդասիրությունը:

«Վեղը շատ չըրչարե: Վեղեն հիշքան շատ չըրչարիս, էնքան վեղը քըխծրանումա, վեղեն քաղծրն էլ տամա պրանետ: Ըստի ասիմ տու էլ աշկո ծակ չի պահիս, ըշտահետ էլ քացախ չանիս: Ծառ շատ տնգե,

\*Չողվածը ընդունվել է 07.12.12:

Չողվածը տպագրության է երաշխավորել ԱրՊԳ հայ գրականության եւ լրագրության ամբիոնը:

համա շիլ չըղնիս քրիստոսա տունգը պուք տաս, քանուն պերած սերմը տնգիս:

Վըղումդ թըմահեն ծառը տնգիս վուչ, չաշմիշ կընիս, հացըդ պատան չի կենալ, սորփը մատաղդ ընթունել չի, կաթնըդ կը շաղե... Հաքիդ վըղումդ խոր վեր թողե, վեր տական-կլխան փչող քամեն կարելուչ թա Ղյամա դիք տակռեն պուք տա»: Սա արցախցու՝ հողին, հայրենի օջախին ամուր կառչելու դարավոր պատվիրան է:

Լ. Հարությունյանի «Նշխարների» 5 հատորներն էլ ազգագրական, բանահյուսական նյութերի անսպառ ու մնայուն գանձարան են և ի հերթին արժևորվում են որպես հարազատ ժողովրդի կյանքը, նիստուկացն ու հինավուրց բառ ու բանը ամբարող ստեղծագործություններ: Հեղինակի բուն նպատակը մեր պատկառելի ժառանգության ընդհանրացումը, հավաքումը, դասդասումն է՝ գիտական դասակարգմամբ ու հետազոտության բանասիրական քննությամբ: Դրանք տեսական ու գործնական ընդհանրացումներով ներկայացնում են Արցախի ժողովրդի կյանքը, նրա լինելության գաղտնիքը: Բազմաթիվ հոդվածներ են հրատարակվել Լ. Հարությունյանի բանահյուսական գործունեության, գրի առած արժեքների մասին, սակայն «Նշխարները» համալրված են կարևոր բանագիտական նյութերով, ազգագրական տեղեկություններով, որոնք խորքային, կառուցվածքային փոփոխություններով անդրադարձնում են իրենց մեջ հայոց կյանքի ու մտքի պատմական տարբեր ժամանակաշրջանների կարևորագույն դրվագները, ժողովրդի բարքերն ու սովորույթները:

Ժողովածուները ստեղծվել են այն համոզմունքով, որ ժողովրդական ստեղծագործությունների հավաքումն ու ուսումնասիրությունը նպաստում է յուրաքանչյուր ազգի ազգային ինքնաճանաչման զգացումի ձևավորմանն ու զարգացմանը, այն խիստ կարևոր է ոչ միայն ազգային պատմության, ժողովրդի կյանքի հետազոտման առումով, այլև գրական լեզվի զարգացման, ժողովրդախոսակցական լեզվի բազմաճյուղ ուսումնասիրման համար:

Ազգագրական լայն ընդգրկում ունի Լ. Հարությունյանի աշխատանքը:

Այն հիմնովին ընդգծում է հեղինակի ինքնության, բանասիրական հակումների, բանահավաքչական աշխատանքի, ազգագրության գիտակի, գրականագետի ու պատմականության և արդիականության խաչմերուկներում ճիշտ դիրքորոշում ունեցող բանագետի վաստակը:

Լ. Հարությունյանի բանահյուսական-ազգագրական ժողովածուները, մեծ ծառայություն լինելով ազգին ու ժողովրդին, ապացուցում են, որ աշխարհի բանարվեստին շատ բան ունի տալու Արցախի ժողովուրդը, որի ստեղծածը հայագիտության մշտահմա կոթողներ են:

Բանահավաքչական աշխատանքը Լ. Չարությունյանին հնարավորություն է տվել ազգագրական նյութերը լուսաբանել մեծ ընդգրկումով: Նրա 5 ժողովածուներն էլ կարևոր աղբյուրագիտական արժեք ունեն նախ և առաջ ազգագրագետների, պատմաբանների, ապա նաև ընթերող լայն շրջանների համար: «Ֆոլկլորագետը չի կարող շրջանցել ազգագրությունը, եթե ցանկանում է բազմակողմանի ու խորն ուսումնասիրել իր առարկան: Բանահյուսությունը և ազգագրությունը սերտորեն կապված են ժողովրդի հետ և երկուսն էլ արտացոլում են նրա պատմական զարգացման ուղին, նրա կյանքն ու պայքարը, մեկը պոետական խոսքի, մյուսը՝ ազգագրական, կուլտուր-կենցաղային առանձնահատկությունների միջոցով: Ֆոլկլորի և ազգագրության այսօրինակ սերտ կապն ու նպատակի նույնությունը հրամայաբար պահանջում է ֆոլկլորագետից լինել լավագույն ազգագրագետ, իսկ ազգագրագետից՝ լավագույն ֆոլկլորագետ», - կարդում ենք Գր. Գրիգորյանի «Հայ ժողովրդական բանահյուսություն» գրքում»<sup>1</sup>:

Ակնհայտ է, որ ժողովրդական բանահյուսությունը ներքին կապ ունի տվյալ ժողովրդի հնամյա ազգային հավատալիքների և ավանդույթների հետ: Իսկ Արցախը պատմական Հայաստանի այն հատվածից է, ուր երկար է պահպանվել հեթանոսությունը: Այդ են վկայում Լ. Չարությունյանի նշխարներում հեթանոսական կյանքին ու կենցաղին վերաբերող երևույթների մեկնությունները:

Գիտնականի անխոնջ ջանքերով է Լ. Չարությունյան ազգագրագետը նոր լուսաբանություններ տվել հնագիտական պեղումների ժամանակ Արցախյան հողում հայտնաբերված նյութական մշակութային երևույթներին: Շատ դեպքում պատմաբանի հմտությամբ են կատարվում քաղաքական-տնտեսական-սոցիալական-կենցաղային մեկնաբանությունները: Մեծ է Լ. Չարությունյանի դերը հայ ժողովրդական բանահյուսական հուշարձանների հայտնաբերման, գրառման, հետազոտության ու գիտական հիմնավորման գործում:

Մոտիկից շփվելով համագյուղացիների, շրջակա գյուղերի բանասացների հետ, Լ. Չարությունյանը կատարում է հնագիտական, բարբառագիտական և ազգագրական հետազոտություններ: Ուսումնասիրությունները, գրքերի զանազան բաժինները վկայում են, որ բանահավաք-ազգագրագետը քաջատեղյակ էր ոչ միայն Արցախի ժողովրդի հարուստ բառ ու բանին, այլև ծանոթ էր հարևան ժողովուրդների նիստ ու կացին, Արցախի պատմության կարևոր իրադարձություններին, նրա դարավոր կյանքի պատմությանը:

<sup>1</sup> Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1967, էջ 21:

Լ. Հարությունյանի ազգագրական նյութերը քաղված են ամենատարբեր աղբյուրներից, ժողովրդից գրառված ու հավաքված է մի պատկառելի բաժին, ստեղծված մի բազմաքանակ, արժեքավոր, յուրատիպ հանրագիտարան, որը վերաբերում է ժողովրդի իրական վիճակին, սոցիալական պայմաններին, աշխատանքի մարդու հոգու տվայտանքներին, հույսերին ու ծգտումներին: Հայրենի եզերքի բանասաց-բանահավաքների ջանքերով Լ. Հարությունյանը ստեղծել է մի պատկառելի ժառանգություն: Բոլոր նյութերի քննություններում տեսնում ենք թե՛ տեքստաբանություն, թե՛ ժանրերի տեսական հիմնավորում, թե՛ պատմություն, թե՛ գրականության, ազգագրության և բանահյուսության խորքային առնչություններ: Բանասերի հմտությամբ են մեկնաբանված տեքստերն, ավանդությունները, դարավոր ծեսերն ու սովորությունները:

Ավանդություններն ազգագրական արժեք ունեցող բանահյուսական կտորներ են: Դրանց նպատակը ոչ միայն գեղարվեստական պահանջի բավարարումն է, այլ նաև համապատասխան պատմական, աշխարհագրական, կենցաղային գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը:

Ավանդությունները և ավանդական զրույցները վաղուց մտել են ազգագրության, հնագիտության շրջանակները: Նման օրինակների հանդիպում ենք Լ. Հարությունյանի «Նշխարների» գրեթե բոլոր հատորներում: Հեղինակի մոտ դրանք մի դեպքում զետեղված են «Զրույցներ, առակներ, ավանդություններ» վերնագրի տակ, մի այլ դեպքում՝ «Ավանդությամբ մեզ հասած տեղեկություններ», որոնց տակ քննարկվում են տարբեր տեղանուններ («Թաքավերեն պալատը», «Իրեք ծառ», «Քուչակավ լցված», «Մեծ Նահատակ», «Պիծի Նահատակ», «Աղջաբեդի», «Քարախայուր, Սռավա կլխեն», Ուվտարան, Ամարաս-վանք, Ամարաս-քաղաք, Աշան, Հերշեն և այլն):

Ազգագրությունը ժողովրդի կենցաղը, սովորույթները, ծագումը, տարաբնակեցումը, էթնիկական յուրահատկությունները, պատմամշակութային առնչությունները հետազոտող գիտություն է: Այս սպեկտրով են գրի առնվել ու մեկնաբանվել բանահյուսական-ազգագրական նյութերը: Լ. Հարությունյանը քաջատեղյակ է հայ ազգագրության անցած ճանապարհին: Այդ են վկայում ազգագրական նյութերի հմուտ դասդասումը, ժանրային առանձնահատկությունների, ժողովրդի պատմության տվյալ հատվածի առանձնահատկությունների դրոշմը՝ ներկայացվող նյութի վրա:

Փաստ է, որ ազգագրական նյութերի բովանդակությամբ առավել ակնառու է Հին Հունաստանի գրականությունը, որի ավանդույթները պահպանել ու զարգացրել են միջնադարի բյուզանդական, պարսկական ու արաբական պատմիչներն ու աշխարհագետները: Որպես ինքնուրույն

գիտություն՝ ազգագրությունը ձևավորվեց 19-րդ դ. կեսին, երբ տարբեր երկրներում ստեղծվեցին ազգագրական հիմնարկներ ու ընկերություններ, հրատարակվեցին հատուկ հանդեսներ:

Բանասեր-մանկավարժ Լ. Չարությունյանը ծանոթ է մեր ազգագրության պատմությանը, հայ միջնադարյան մատենագրությանը, որտեղ բազմաթիվ են ազգագրական նյութերը: Այդ են վկայում մամուլի էջերում հրատարակված նրա բազմաթիվ հոդվածները՝ գրականության, գրականագիտության ամենատարբեր թեմաների, հարցերի շուրջ:

«19-րդ դարի սկզբներին գրականության մեջ հաճախակի դարձան ազգագրական նյութերի գրառումները (Մ. Թաղիադյան, Խ.Աբովյան, Մ. Բժշկյան, Մ. Էմին, Ղ. Ալիշան և ուրիշներ): Սակայն բանահյուսությանը միահյուսված ազգագրության ձևավորման սկիզբը 60-80-ական թվականներն են: Ազգագրության մեջ մեծ դեր խաղացին Գ. Սրվանձոտյանցը, Գր. Խալաթյանը, Ե. Լալայանը և ուրիշներ: Մեծ ուշադրություն դարձվեց ազգագրական նյութերի վերլուծմանը, ժողովրդական կենցաղի ու մշակույթի ուսումնասիրմանը», - կարդում ենք «Հայկական Սովետական հանրագիտարանում»:<sup>1</sup>

Ազգագրության կարևոր բաժիններից մեկը համարելով բանահյուսությունը՝ Լ. Չարությունյանը բացահայտում է նրա գեղագիտական ֆունկցիան, ընդգծում ծագումնաբանական արմատները, որոնք տանում են դեպի ժողովրդի պատմությունը, նրա կենցաղն ու բարքերը: Լ. Չարությունյանի հավաքած, գրի առած բանարվեստի նմուշները զուգակցվում են ազգագրությանը՝ դառնալով հայ բանագիտության մեջ եզակի արժեք ներկայացնող հատված, որի ուսումնասիրությունն անտարակույս, ավարտված չէ: Ավարտված չեն, օրինակ, այնպիսի խնդիրների լուծումներ, որոնք վերաբերում են Արցախի բանահյուսության ազգային առանձնահատկություններին, որոշակի կառուցվածքային կապերին, լեզվաոճական հարցերին. «Սխալ կլիներ պնդել, թե հայ բանագիտությունը արդեն լուծել է իր առջև ծառայած բոլոր հարցերը...,- գրում է Ա. Ղանալանյանը,- հայ ժողովրդի հարուստ բանահյուսության բոլոր ժանրերն ու ստեղծագործությունները, թեմաներն ու հարցերը չէ, որ արժանացել են հավաստի ու անհրաժեշտ ուշադրության: Համեմատաբար քիչ են հայտնաբերված, գրի առնված, ի մի բերված և ուսումնասիրված մեր ժողովրդական մանրապատումները, հմայական աղոթքները և այլն»:<sup>2</sup>

Հիրավի, բազմաթեմա և բազմազան է Լ. Չարությունյանի ստեղծագործական աշխարհը: Այն դեռևս չբացահայտված շատ հարցեր ունի՝

<sup>1</sup> Հայկական Սովետական հանրագիտարան, Երևան, 1974., հ.1, էջ 103:

<sup>2</sup> Ա. Ղանալանյան, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985, էջ 53:

կապված բանահյուսական առնչությունների, ժողովրդի պատմա-մշակութային արժեքների քննության հետ:

Քննելով Լ. Հարությունյանի «Նշխարների» 5 հատորներում զետեղված նյութերը, նկատում ենք մի կարևոր հանգամանք. ազգագրական ու բանահյուսական նյութերում ակնհայտ պաշտամունքը Աստծո, երկնային մոլորակների հանդեպ: Այդ մասին մանրամասն խոսում է հեղինակը իր գրականագիտական հոդվածներում և, հատկապես, «Նշխարների» I գրքի առաջաբանում:

Ղարաբաղցին պաշտում է աստծուն՝ որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Հայ աշխատավորը աստծո անվան հետ է կապում մարդկային բարօրության հույսը և պատեհ առիթով աղաչում էր, որ մեղքանա և սատար լինի նրանց, ովքեր նեղ օրում են: Նա աստծո գաղափարի մեջ է դրել նաև ղեկավարի, առաջնորդի, զորավարի հանդեպ իր իդեալը: Նրա չգոյության մեջ էլ նա տեսել է իր դարավոր երազանքների, հավատի փլուզումը: «Աստուծ հիշքան կենդան ա ըլալ, մունք մռնեիս չընք ըլալ, էս մին ըշխարքաս սաղ-սալամաթ քնիիս ընք ըլալ էն մին աշխարքը: Մեռնելը միենգ ա: Մինչև մեռնելը սրտրմես ճաքումա»:<sup>1</sup>

Ղարաբաղցին միայն Աստծո հետ չէր «ընկերական», այլև բնության հզոր ու իրական բոլոր ուժերի՝ արևի, լուսնի, գիշերվա, ծովի...

Այսպես. հնձվորը ջրով լի կուլան դրել էր ծառի ստվերում, ինքը գործի անցել: Արևը բարձրանում է դեպի կիզակետ, և կուլան ընկնում է պլպլան արևի տակ: Ջուրը տաքանում է: Հնձվորը փորձում ու չի խնում, հայացքը դարձնում է դեպի արևը. «Իմ տեղը վեր տու ընիս, կլակի՞ս...»

Կամ. «Լուսինը չարաճճի աղջնակ է եղել, չարչարել է մորը, երբ նա խնոր էր հունցում: Համբերությունը հատած մայրը խնորոտ ձեռքով ապտակում է աղջկան: Նա խռովում է ու թռչում երկինք: Հիմա էլ խնորոտ ու ալրոտ է նրա դեմքը և կարող ենք նայել ու տեսնել, թե ինչպես է անպի տակից կարոտով նայում իր մորը»:<sup>2</sup> Բազում են օրինակները: Լ. Հարությունյանը խոսում է երաժշտության, երգի ու պարի, սգո երգերի ոգեղեն ընդգրկվածության, նրանց թողած լայնածավալ ազդեցության սահմանների մասին:

«Համոզված եմ, որ համաշխարհային երաժշտության պատմությունը այդ կապակցությամբ դեռ իր լիահնչյուն խոսքը կասի»: «Ինչպիսի

<sup>1</sup> Լ. Հարությունյան, *Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991, էջ 10:*

<sup>2</sup> *Նույն տեղում, էջ 10:*

անուններով թաքցրած լինեն նրանք, թեկուզ օտար երաժշտաշարչով յոթկեղևված, խոսում են մեր սրտի ու արյան հետ, մրմնջում են ուրիշներին անհաղորդ՝ հայկական ցավ ու կարոտով»,- գրում է բանահավաքը:<sup>1</sup>

Լ. Հարությունյանը, հենվելով տարեց բանասացների պատմածների վրա, բացատրում է «Յալի» պարի էությունը:

Պարը կատարվում էր «Նահատակ» կոչվող վանքի լայնարձակ տափարակում, իսկ վանքը գտնվում է Ղզղալա գյուղի մոտ, նույնանուն սարի բարձրադիր հարթության վրա: Պարի պատրաստությունը կատարվում էր արևագալից առաջ: Իսկ արևագալի հետ տաքանում էր պարը՝ ընդգրկելով բոլորին (Յալի փոքնել): Հետո դրան հետևում էր կոխը, խաղկապուկները, հետո՝ ճինջեխը, որի նկարագրությունը հետաքրքիր է ու նպատակային:

Լ. Հարությունյանը վկայում է, որ Յալին սկզբից արևապաշտական ծիսական պար է եղել, հետո այն ունեցել է իր տարատեսակները: Յալիին նախորդել է «կանչ» նվագը: Որն ուղեկցվել է զուռնա-դիոլի նվագակցությամբ:

Լ. Հարությունյանը խոսում է նաև կապերտի, գորգի, կենցաղային գործածության այլ իրերի մասին: Հետաքրքիր բացատրություններ են տրվում հայկական գորգանախշերի, վիշապագորգի մասին:

«Նշխարների» առաջաբանում հեղինակը խոսում է ղարաբաղյան աղբյուրների մասին, իսկ աղբյուրի մոտ ղարաբաղցին հավերժակենաց ծառ է տնկել՝ թե՛նի, կաղնի, ընկուզենի, քեֆի սեղան է բացել, եկող-գնացողին, ծանոթ-անծանոթին նստեցրել է «վերին թարեքին», նրա պատվին գինու նոր կարաս է բացել: Աղբյուրը շինել է «հովտ ու նավով»: Երկար նավը անասուններին ջրելու համար, իսկ ակնը՝ մեծ ու փոքր, մեծ ու փոքրի համար:

Լ. Հարությունյանը հիշատակում է, որ ղարաբաղցին հնուց ի վեր աչքի է ընկնում ամուր հիմք ունեցող բարոյականությամբ ու կայուն սովորություններով: Նույնիսկ կանոնարկված էին հայկական կյանքի բոլոր բնագավառները: «Աչքը տեսածն ա սիրում», - ասում է ղարաբաղցին և սա հենց պահպանել է ընտանեկան կայունությունը:

Ըստ ղարաբաղցու՝ սերը կծարձակի տևական կենակցության ջերմոցում: «Թեկուզ մարթ ու կին, էլի մարթը կնգանան բոլի հմանչի, կնեզը՝ մարթան», կամ «Մեր Օսանենն նիետ էնքան օր ու քշեր ըմ ըրալ, քուր-ախպեր ընք տեռալ»:

<sup>1</sup> Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991, էջ 11:

Ղարաբաղցին ամուսնանալու հարցում խիստ պահանջկոտ է, վճռական: Նա զանազանում է ներքին և արտաքին գեղեցկությունը, վճռական համարում ներքինը: «Ղշընգոթունը սարու ձյուն ա, սարը բդի դաշանգ», «Ղաշանգն ասումա՝ ինձ հռնանցե եշի»: Տղամարդու համար է ասված՝ «կնեգ ըրա, քնենք ըրա» (լավ մտածիր): Համեստությունը, առաքինությունը այն թևերն են, որ կնոջը պետք է պահեն ավանդական բարձրության վրա: Մի գրույցի մեջ կինը մեղադրվում է այն բանի համար, որ երագում տղամարդուն ներկայացել է թեթևաբարո կողմերով. «Վեր իմ ըրագումս տի ըս, քու ըրագումդ հո՞ւնց կընիս», - ասում է ամուսինը: (Էդ խոսքը մտքումը ասելն էլ ա համոթ):

Ժառանգության հաշվառումը խիստ կարևոր է ամուսնական հարաբերություններում: Օխտը պորտը հաշվառելը ամուսնական հարցում պարտադիր է:

«Սերտն ու տոռնը պեց ղարաբաղցե», - այսպես են անվանել ղարաբաղցուն: Նույնիսկ ղարաբաղցու չափավորության մասին է խոսում այն երևույթը, երբ ասում են. «Վեր մարթին աչքը հացեն յրան ընի, հիվանդանալ չի», «Վեր մին պենան շատ կերեր, կընհամե»: Հացի նկատմամբ պաշտամունքի հասնող սերն է ղարաբաղցու էությունը: «Մարթին անա մրթավըտ պիտի կյա», - ահա ղարաբաղցու ցանկությունը:

Լ. Հարությունյանը մոռացումից փրկում է արցախյան թռչունների, կենդանիների, միջատների, խոտաբույսերի, ուտեստների, թխվածքների երկար ցանկեր: Առաջին հատորի «Բանաձևային բանահյուսություն» բաժնում գետեղված են ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, խրատներ, օրհնանքներ, կենացներ, սպառնալիքներ, անեծքներ, ժողովրդական խաղեր, հանելուկներ, շուտասելուկներ, հին անձնանուններ և այլն, որոնք վերաբերում են արցախցու սովորույթներին, վարք ու բարքին:

Լ. Հարությունյանի բանահավաքչական գործունեության մի կարևոր առանձնահատկությունն այդ աշխատանքի ընդգրկած տեղագրական լայն ոլորտն է՝ Արցախ աշխարհը, նրա պատմական հիմնավուրց տարածքը, ուր ապրել է հայը և ճակատագրի բերումով տարագրվել՝ իր հետ տանելով իր բանարվեստի նշխարները:

Երիցս ճիշտ է Խ. Աբովյանը, որ «ժողովրդական բանահյուսությունը ամենից առաջ հարուստ ու թանկագին նյութ կարող է տալ ազգագրագետի համար, քանի որ նրա մեջ լայնորեն դրսևորված են ժողովրդի հավատալիքները, սովորությունները, վարքն ու բարքը»:

Լ. Հարությունյանի շրջագայությունների, ժողովրդի մեջ հաճախակի լինելու, նրա՝ լսելու կուլտուրա ունենալու, հետաքրքրասիրության



դրսևորման արդյունքն են ժողովրդի կյանքի, կենցաղի, վարք ու բարքի, նիստ ու կացի մանրակրկիտ ուսումնասիրությունը: Հնուտ բանասացն ու ազգագրագետը բացատրություններ ու ծանոթագրություններ է տվել ժողովրդական բանասացների տարիքի, սոցիալական-կենցաղային միջավայրի, բանահյուսական բնատուր ընդունակությունների, կատարողական արվեստի վերաբերյալ: Այդ բացատրություններն ու ծանոթագրությունները հնարավորություն են տալիս ավելի լայն պատկերացնելու բանահյուսական այս կամ այն ստեղծագործության բնույթը, ժանրային առանձնահատկությունները:

Ազգագրական նյութերը լուսաբանված են բազմակողմանիորեն ու լայն ընդգրկումով:

Ժողովածուներում հետաքրքիր ազգագրական նյութեր կան ժողովրդական բժշկության, հարսանեկան ծեսերի, վիճակախաղերի, բուժիչ բույսերի, բուժիչ աղբյուրների, սուրբ ծառերի, խաչի պաշտամունքի վերաբերյալ:

Ազգագրական բազմաթիվ նյութերը վկայում են արցախցու բարեպաշտությունը, հյուրամեծարությունը, ազնիվ, պարզ ու անխարդախ ոգին: Անձնական բանահավաքչական աշխատանքներին գուգահեռ Լ. Հարությունյանը իր մտերիմներին, ծանոթներին, աշակերտներին համախմբել է իր շուրջը: Նրանք բավականին նյութեր են տրամադրել հեղինակին: Անմշակ այդ նյութերը բանահավաք խմբագրել է՝ յուրաքանչյուրի մեջ դնելով նպատակամետ վերաբերմունք՝ հայ ազգագրությունը ճիշտ գնահատելու առումով: Ազգագրական նյութերը 5 ժողովածուներում էլ լուսաբանված են բազմակողմանիորեն և լայն ընդգրկումով: Հետաքրքիր է Լ ժողովածուի «Բառարան» բաժինը: Նախաբանում հեղինակը հավաստում է, որ իր «մեկնությունները հաճախ խուսանավում են նախածանոթ ու նախանշված շավղից»: Անկեղծ է ասված, այնքան անկեղծ, որ չես էլ փորձում «մեղք գործել», ասել է թե՛ կասկածել շատ բացատրությունների ճշտությանը: Սա չէ կարևորը: Կարևորը հեղինակի պրպտումներն են բառաբացատրությունների անդաստանում՝ թեկուզ երբեմն վրիպումներով ու սխալներով, մտացածին որոշ ընդհանրացումներով, որի համար և հայցում է ընթերցողի ներողամտությունը: Այնուհանդերձ մեկնությունները յուրօրինակ բանալիներ են՝ բացահայտելու երևույթը, սովորույթը, ազգագրային դիմագիծը, դիտելու դրանք ընդհանուր ժողովրդական ստուգաբանության համապատկերում: Որոշ մտացածին բացատրությունները ստվեր չեն ձգում գիտնական-բանասերի պրպտումն մտքի, ստեղծագործական երևակայությամբ կատարած հայտնագործությունների վրա: Առավել՝ խորհելու տեղիք են տալիս:

Կարևորն այն է, որ Լ. Հարությունյանը կարողանում է բացել պատմական անցյալում Արցախի կյանքում ճակատագրի բերումով տնտեսական, առավել ևս՝ քաղաքական իրավիճակների վրա դարերի ընթացքում ծանրացած վարագույրը, հետաքրքիր մեկնություններով բացահայտում է հայ ժողովրդի արցախյան հարվածի հուշարձանների ներքին գաղտնիքները՝ կապված հոգևոր ու նյութական արժեքների ճանաչողական ու դաստիարակչական նշանակության հետ:

«Բառարանի» բացատրությունների մի մասը դարձվածքներ են, որոնք ևս արցախցու բնավորությունը, ազգային դիմագիծն են բնութագրում: Այսպես օր.

1. թկը մհակ անել - կռվել, ծեծկռտուք անել, աղմկել
2. էշը մոխրում թավիլ տալ-սիրած բանով զբաղվել
3. Ըստծու թափշուր անել-հանձնել Աստծո խնամակալությունը, աղերսել Աստծուն
4. թոզը եր անել-ծեծել
5. Ժժըպապա անել-պարել՝ դեմքը ծամածռելով
6. Երեսը պինդ-անամոթ, համառ և այլն

«Նշխարների» հատորներում զետեղված են շուրջ 4 հազար դարձվածքներ, ավելի քան 5000 բառ-հոդված՝ բացատրված, մեծ մասը՝ ստուգաբանված:

Ուշադրության արժանի են «Տեղանուններ» բաժնի բացատրությունները-Վարանդա, Մուղան-Մուխանի, Ղարաղշլաղ, Կանաչ Թալա, Արքևան, Ցից քարեր, Հաղորտի և այլն: Իրավացիորեն բանահավաքը տեղանունը համարում է պատմական վկայություն, իր մեջ դարերի խորհուրդը ներառնող հուշարձան: Լ. Հարությունյանը նախ ներկայացնում է անհիշելի ժամանակներից մեզ հասած տեղանվան պատմական կողմը, ապա նաև՝ նրա հետ առնչվող ավանդությունները, բառ ու բանը: «Մի նվիրական անուն» խորագրի տակ ազգագրագետը պատմում է «Քուչակեն բաղ» տեղանվան մասին՝ այն կապելով տաղասաց-գուսան Քուչակի պանդխտության հետ: Բացառված չէ, որ աստանդական բանաստեղծն իր երկար կյանքի մի մասն անց է կացրել Ղարաբաղի դեռևս չեն քաղաքներում և գյուղերում: «Գուցե նա իր սիրո և գինու երգերի մի մասը հորինել է հենց հինավուրց Կուսաբերդի դիմաց և գինու, սիրո և խաղողի երգեր է երկնել»:<sup>1</sup> «Վարանդա» տեղանունը հեղինակը դիտում է որպես վար և անդ բաղադրիչներից կազմված բարդություն: Վար-վայր բառի հնչյունափոխ ձևն է, որն Արցախի բարբառում վար, վեր, նոր ձևերով

<sup>1</sup> Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Ստեփանակերտ, 2009, գիրք IV, էջ 92:

«բաղադրվելով այլևայլ բառերի և ածանցների հետ, ստեղծել են բազմաթիվ բառադարձվածքային կազմություններ»<sup>1</sup>

Նախապես բառը նշանակել է ցածրադիր տարածք, դաշտ, դաշտավայր...

Բերված են վեր բառով կազմված հարադրությունների օրինակներ (վեր եկած, վեր թափել, վեր հմբարել, վեր օնիլ, վեր քինիլ և այլն): Նշանակալից են Լ. Հարությունյանի կողմից կատարված պատմական, աշխարհագրական, կենցաղային միջավայրի նկարագրությունները և միաժամանակ կատարվող ստուգաբանությունը: Լ. Հարությունյանը պեղեց, ուսումնասիրեց հայրենի լեռնաշխարհը, ճանաչեց հայրենի ծառը, թուփը, շենը, ձորը, պատմական կոթողը, մոտիկից շփվեց ժողովրդի հետ, ուսումնասիրեց նրա կենցաղը, նիստուկացր՝ հրապարակ հանելով 5 հատորանոց աշխատություն՝ հայ ժողովրդի Արցախի հատվածի բանավոր ստեղծագործության գանձերը և իր արժեքավոր լուծանքները հայ բանագիտության մեջ: Լ. Հարությունյանի «Նշխարների» բանահյուսական ու ազգագրական արժեքը առաջին հերթին հետևյալումն է.

«Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փոքրիկ, չնչին թվացող մի աղվամազ, լինելու է միակ ու թանկագին. մեր ազգուտակի հիշատակի պես սիրելի», - գրում է Լ. Հարությունյանը: Բոլոր ժողովածուներում էլ մենք տեսնում ենք հեղինակի անսքող սերը, հարգալից վերաբերմունքը բանահավաքչությանը, ազգագրությանը զբաղվող մարդկանց հանդեպ, իսկ բանասացները «իմ խելացի ու փորձառու զրուցակիցները երբ կային իմ շրջապատում, ինձ այնպես էր թվում, թե վաղուց է, ինչ նրանք եկել են հարյուր հազար տարվա հնությունից: 126-ամյա Սարգիս Դանիելյանը, 108 ամյա Շուքուր Խաչատրյանը, Բերդաշենցի Գրիգոր Առստամյանը, Իդունց Կարանաբին...

- Մեր սերունդներին էր հարկավոր մարդուն առողջ պահելու նրա 1000-ամյա փորձը: Բայց մենք անտարբեր գտնվեցինք դաժան օրերին: Իսկ նա էլ մեր անտարբերությունից դառնացած հեռացավ մեզ պատկանող աշխարհից: Քանի՞ քանիսն են արհամարհված հեռացել՝ կուլ տալով անգոսնության կծու հաբերը: Մենք չհասկացանք, որ բանասացը մարդ լինելուց զատ նաև արժեք է, իմաստուն, ասող, անող, հիշող, հին օրերի հմայքն իմացող, անցյալը ներկային փոխանցող ազգային արժեք, որին որպես այդպիսին, պետք է գնահատենք ու սիրենք, - գրում է Լ. Հարությունյանը:<sup>2</sup> Ինչպես խոստովանում է բանահավաքը, ստեղծագործական տարիների իր II կլանիչը ազգագրական աշխատանքն է եղել՝ վերջին

<sup>1</sup> Լ. Հարությունյան, *Նշխարներ Արցախի բանահյուսության, Ստեփանակերտ, 2009, գիրք IV, էջ 31:*  
<sup>2</sup> «Ամսագրաս», 2001 դեկտ., համար 22:

տասնամյակների իր ամենասիրելի զբաղմունքը: «Դրանով են հաղորդակցվել մեր ժողովրդի տարեգրությանը, և դրանով է, որ իմ մեջ ամբողջացավ ինքնուրույն ու հայկական, երբեք ուրիշին չնմանվող նրա լինելության կերպը: Եվ դա վեհացնում էր ինձ ու ես ավելի ամուր էի կապվում նրա առօրյային ու ապագային»<sup>1</sup>, - գրում է նա:

Լ. Չարությունյանի «Նշխարների» 5 հատորյակից դուրս չեն մնացել հայրենի Արցախի կյանքին ու կենցաղին վերաբերող ազգագրական որևէ դրվագ, որի գիտական, բանահյուսական արժեքը անչափ մեծ է: Ըստ հեղինակի՝ «հայ ժողովուրդն ունի ազնվատոհմիկ պատմություն: Նա ի սկզբանե սուտ ու կեղծիք չի խառնել իր պատմությանը»:

Հայ ժողովրդի արցախյան հատվածի սովորություններն ու վարքուբարքը իրենց ակունքներով մաքրամաքուր են ու ժողովրդական: Ահա թե ինչու բոլորի կողմից ընդունված են ու սիրելի:

Հայ ժողովրդական բանահյուսության, ազգագրության ուսումնասիրությունը ազգային ինքնաճանաչողության զարգացման գործոն է, նաև՝ Արցախի հնագույն պատմությունը աշխարհին հաղորդելու միջոց:

«Ի ծննդե մերված են քո ոգու գեղեցկությանը, ինչպես Արևին: Հավիտենական հայ, հավիտենական Արև», - գրում է բանահավաք-ազգագրագետ, նաև մանկավարժ ու բանագետ Լ. Չարությունյանը<sup>2</sup>:

Արցախցին գիտի իր բառ ու բանի արժեքը: Ահա թե ինչու իր խոսքն ու զրույցը գրի առնողին միշտ էլ օրհնել է՝ պերանդ քաղցր կենա: Ներակ տեսնամ Աստված հար-հավիտենական կյանք տա քեզ, աշխարքս քզանավ լիանա...

Լ. Չարությունյանը հասցրեց գրել իր 5-րդ գիրքը, այն համոզմունքով, որ մահվանից հետո հիշատակը չի թառամի: «Հուսով եմ, որ պետք կլինեն իմ ժողովրդին մահվանից հետո էլ,- գրում է Լ. Չարությունյանը<sup>3</sup>: Երիցս ճիշտ է ասված: Գործն է անմահ...

ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ. Չարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991:
2. Լ. Չարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք III, «Սոնա», Ստեփ., 2007:
3. Լ. Չարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք IV, Ստեփ., 2009:
4. Լ. Չարությունյան, Նշխարներ, գիրք V, Ստեփ, 2011:
5. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1967:

<sup>1</sup> Լ. Չարությունյան, *Գրառումներ ծոցատեսորից, Ստեփանակերտ, 2004, էջ 4:*

<sup>2</sup> *Նույն տեղում, էջ 155:*

<sup>3</sup> *Նույն տեղում, էջ 62*

Л. Арутюняна “Реликвии”, а так же этнография

Анаит Атаян

Резюме

В названии статьи “Л. Арутюняна” “Реликвии, а так же этнография” говорится о пяти сборниках знаменитого арцахского педагога, филолога, фольклориста и этнографа Левона Арутюняна, которые являются биографией арцахского народа, ее историческим воспоминанием, которые на протяжении веков розложились на мифы и легенды, традиции, сказки и другие фольклорные жанры.

Цель автора - обобщение, сбор и классификация исторического наследия, с научным исследованием.

Этнографические материалы собраны из различных источников. Пятитомник, имеющий энциклопедическую ценность, является и текстологией, и теоретическим обобщением этнографического жанра, и историей, и этнографией.

Велика ценность этнографических материалов в сборниках.

Их важной особенностью является выраженное широкое географическое исследование Арцахской земли, ее исторической территории, где жил армянин и волей судьбы нес на себе свои традиционные реликвии.

L. Harutyunyan's "Relies" and "Ethnography".

Anahit Atayan

Summary

L. Harutyunyan's "Relies" and "Ethnography" introduce the five collections of Levon Haroutyunyan. The latter was a great pedagogue, philologist, folk lore specialist and ethnograph. The mentioned works can be regarded as the biography of the Artsakh people, their historic recollections which have become myths, legends, traditions, fairy-tales and other folk works through many centuries. The author aimed, to collect, classify, consolidate and finally to investigate the historic material.

The ethnographic information presented by him has different sources. L. Haroutyunyan's work consisting of five volumes has encyclopedic value. It's the theoretic consolidation of ethnographic genre. At the same time it's both history and ethnography.

One of the distinctive features of the mentioned work is the wide-scale geographic study of the Artsakh land and its historic territory where the Armenians lived and inherited their traditional relics by the will of fate.